

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
2015Թ. ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

Հաշվետու ժամանակում ակադեմիայում իրականացվել են աշխատանքներ հետևյալ ուղղություններով՝

- ղեկավար կազմի և մասնագետների վերապատրաստում, որակավորման բարձրացում.
- հրշեջ-փրկարարների վերապատրաստում, որակավորման բարձրացում.
- բարձրագույն և միջին մասնագիտական կրթական ծրագրերով մասնագետների պատրաստում.
- բնակչության ուսուցում.
- գիտամեթոդական աշխատանքների կատարում.
- Մշակութային դաստիարակության աշխատանքների կատարում
- միջազգային համագործակցություն.
- լրացուցիչ աշխատանքներ:

1. Ղեկավար կազմի և մասնագետների վերապատրաստում, որակավորման բարձրացում.

2015 թ. ակադեմիայում վերապատրաստման և որակավորման բարձրացման դասընթացներ են անցել 1921 ունկնդիր (պլանով՝ 1824) 86 ուսումնական խմբերում (պլանով՝ 86 խումբ):

- Հաշվետու ժամանակաշրջանում՝
- ՀՀ նախարարություններից և գերատեսչություններից ուսուցում է անցել 337 ունկնդիր.
 - ՀՀ մարզերից ուսուցում է անցել 477 ունկնդիր.
 - Երևանի քաղաքապետարանից և Երևան քաղաքի վարչական շրջաններից ուսուցում է անցել 603 ունկնդիր:
 - Ոչ պետական կազմակերպություններից (այդ թվում նաև միջազգային) 464 ունկնդիր:

2. Հրշեջ-փրկարարների վերապատրաստման և որակավորման բարձրացման ուղղությամբ.

ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015թ. հունվարի 23-ի N21-Ա հրամանով հաստատված ՀՀ ՏԿԱԻՆ ՃԿՊԱ-ում ՀՀ ՏԿԱԻՆ ՓԾ ծառայողների 2015թ.-ի վերապատրաստման դասընթացների անցկացման պլան-ժամանակացույցի համաձայն, ՃԿՊԱ փրկարարական ֆակուլտետում

կազմակերպվել և անցկացվել են հետևյալ դասընթացները, առարկայական ստուգարքներն ու քննությունները՝

- ՀՀ ՏԿԱԻՆ ՓԾ ՓՈՒՎ ՀՆՓԱԻԿ-ի ծառայողների մասնակցությամբ, «INSARAG»-ի IEC միջազգային որակավորման քննությունների նախապատրաստման դասընթացներ՝ «Տեխնիկական որոնում» թեմայով (24 ժամ, 11 մասնակից),
- ՀՀ ՏԿԱԻՆ ՓԾ ՓՈՒՎ ՀՆՓԱԻԿ-ի ծառայողների մասնակցությամբ, «INSARAG»-ի IEC միջազգային որակավորման քննությունների նախապատրաստման դասընթացներ՝ «Շինարարական կառուցվածքների կայունացման համակարգեր՝ ամրակապում» թեմայով (40 ժամ, 8 մասնակից),
- ՀՀ ՏԿԱԻՆ ՓԾ ՓՈՒՎ ՀՆՓԱԻԿ-ի ծառայողների մասնակցությամբ, «INSARAG»-ի IEC միջազգային որակավորման քննությունների նախապատրաստման դասընթացներ՝ «Բարձրությունների վրա փրկարարական աշխատանքների կազմակերպում՝ պարանային աշխատանք» թեմայով (40 ժամ, 15 մասնակից),
- ՀՀ ՏԿԱԻՆ ՓԾ ՓՈՒՎ ՀՆՓԱԻԿ-ի ծառայողների մասնակցությամբ, «INSARAG»-ի IEC միջազգային որակավորման քննությունների նախապատրաստման դասընթացներ՝ «Վթարափրկարարական տեխնիկական միջոցների կիրառում» թեմայով (40 ժամ, 12 մասնակից),
- «ՀՀ ՏԿԱԻՆ ՓԾ ՄՓՎ ՀՓՁ-ների հրամանատարների տեղակալների վերապատրաստման» դասընթաց (56 ժամ, 10 մասնակից):
- «ՀՀ ՏԿԱԻՆ ՓԾ ՄՓՎ ՀՓՁ հրամանատարների տեղակալների և ԵՓՎ բաժինների հրդեհաշիջման գծով ավագ հրահանգիչների վերապատրաստման» դասընթաց (56 ժամ, 15 մասնակից),
- «ՀՀ ՏԿԱԻՆ ՓԾ ՄՓՎ ՀՓՁ հերթափոխի պետերի վերապատրաստման» դասընթաց (160 ժամ, 15 մասնակից),
- ՀՀ ՏԿԱԻՆ ՓԾ ՓՈՒՎ ՀՆՓԱԻԿ-ի ծառայողների մասնակցությամբ, «INSARAG»-ի IEC միջազգային որակավորման քննությունների նախապատրաստման դասընթացներ՝ «Համակողմանի ապահովում» թեմայով (40 ժամ, 6 մասնակից),
- «ՀՀ ՏԿԱԻՆ ՓԾ ՄՓՎ ՀՓՁ հերթափոխի պետերի վերապատրաստման» դասընթաց (160 ժամ, 15 մասնակից),
- «ՀՀ ՏԿԱԻՆ ՓԾ ՀՓՁ հրամանատարների վերապատրաստման» դասընթաց (56 ժամ, 15 մասնակից),
- Ի կատարումն ՀՀ ՏԿԱԻ նախարարի 30.10.2015թ. N1140-Ա հրամանի ս/թ նույնբերի 2-ից դեկտեմբերի 1-ը կազմակերպվել և իրականացվել է «ՀՀ ՏԿԱԻՆ ՓԾ ՄՓՎ ՀՓՁ հերթափոխի պետերի վերապատրաստման» դասընթաց (160 ժամ, 15 մասնակից):
- 2015թ.-ի վերապատրաստման դասընթացների անցկացման գրաֆիկի 9-րդ կետով նախատեսված ՀՀ ՏԿԱԻՆ ՓԾ ՄՓՎ ՀՓՁ-ների հրամանատարների (Լոռի, Շիրակ, Տավուշ, Սյունիք) վերապատրաստման դասընթացը (56 ժամ 15 մասնակից) չի իրականացվել հիմք ընդունելով ՀՀ ՏԿԱԻ նախարարության ՓԾ տնօրենի 11.08.2015թ.-ի 17.7/152694-15 գրությունը:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ ՏԿԱԻՆ ՃԿՊԱ-ի փրկարարական ֆակուլտետում ՓԾ ծառայողների 2015թ.-ի դասընթացների պլան-ժամանակացույցի համաձայն, դասընթացներին, առարկայական ստուգարքներին ու քննություններին մասնակցել են 137 ՓԾ ծառայողներ:

Ի կատարումն ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի համապատասխան հրամանների հաշվետու տարում փրկարարական ֆակուլտետի գործունեության արդյունքում իրականացվել են ՀՀ ՏԿԱԻՆ ՃԿՊԱ-ում ՀՀ ՏԿԱԻՆ ՓԾ ծառայողների 2015թ.-ի վերապատրաստման դասընթացների անցկացման պլան-ժամանակացույցով չպլանավորված հետևյալ դասընթացները`

- ՀՀ ՏԿԱԻՆ ՓԾ ՓՈՒՎ ՀՆՓԱԻԿ-ի ծառայողների մասնակցությամբ, «INSARAG»-ի IEC միջազգային որակավորման քննությունների նախապատրաստման դասընթաներ` «Ամրակապում» թեմայով (40 ժամ, 12 մասնակից),
- ՀՀ ՏԿԱԻՆ ՓԾ ՓՈՒՎ ՀՆՓԱԻԿ-ի ծառայողների մասնակցությամբ, «INSARAG»-ի IEC միջազգային որակավորման քննությունների նախապատրաստման դասընթաներ` «Մաքուր կտրում» թեմայով (40 ժամ, 12 մասնակից),
- Սյունիքի և Շիրակի մարզերի քաղաքային որոնողափրկարարական թիմերի ուսուցում և 36-ժամյա ուսումնավարժություն (յուրաքանչյուր մարզում 47 մասնակից), ընդհանուր մասնակիցները` 94,
- «Ռոստելեկոմ» ՓԲԸ աշխատակիցների «Բարձրությունների վրա աշխատանքների իրականացում» թեմայով տեսական դասընթացներ (16 ժամ, 38 մասնակից, 3 խումբ),
- «Տարածքային արագ արձագանքման թիմերի ստեղծում» ծրագրի երկրորդ փուլի շրջանակներում «Կառավարում» թեմայով (40 ժամ, 20 մասնակից),
- «Տարածքային արագ արձագանքման թիմերի ստեղծում» ծրագրի երկրորդ փուլի շրջանակներում «Ամրակապում և մաքուր կտրում» թեմայով (32 ժամ, 22 մասնակից),
- Գերմանական Կարմիր Խաչի Բաղեն – Վյուրտեմբերգի երկրամասային դպրոցի հետ համատեղ ՃԿՊԱ-ում կազմակերպվել և անցկացվել է ՕԿՎ ճգնաժամային կառավարման կենտրոնի «911» ծառայության կենտրոնական ահազանգման կենտրոնի կրտսեր հրահանգիչների («911» օպերատորների) և փորձնակների ուսուցում (80 ժամ, 15 մասնակից):
- Տավուշի և Լոռու մարզերում կազմակերպվել և իրականացվել է մարզերի քաղաքային որոնողափրկարարական թիմերի ուսուցում (յուրաքանչյուր մարզում 47 մասնակից), ընդհանուր մասնակիցները` 94,
- «Ամրակապման աշխատանքներ» թեմայով դասընթաց (16 ժամ, 7 մասնակից),
- «Որոնում և տեխնիկայի խնամք» թեմայով դասընթաց (40 ժամ, 18 մասնակից),
- «ՀՀ ՏԿԱԻՆ ՓԾ Գեղարքունիքի ՄՓՎ ՀԶԶ ծառայողների վերապատրաստման» դասընթաց (40 ժամ, 5 մասնակից),

- Լոռու և Տավուշի մարզերի ԶՈՓ թիմերի անձնակազմի «Լեռնափրկարարական պատրաստության» դասընթացներ (40 ժամ, 14 մասնակից):

Հաշվետու ժամանակահատվածում ՃԿՊԱ-ի փրկարարական ֆակուլտետում չպլանավորված դասընթացներին, մասնակցել է 351 ունկնդիր:

Ի կատարումն ՀՀ ՏԿԱԻ նախարարի համապատասխան հրամանների կազմակերպվել և իրականացվել է ՀՀ ՏԿԱԻՆ փրկարարական ծառայողների 2014թ. հերթական ատեստավորման արդյունքում կենտրոնական և տարածքային ատեստավորման հանձնաժողովների կեղմից ընդունված՝ «Ատեստավորումը հետաձգել մեկ տարի ժամկետով և առաջարկել՝ ծառայողին գործուղել վերապատրաստման» որոշման համաձայն թվով **59** ծառայողների վերապատրաստման տեսական դասընթացներ և թվով **55** ծառայողների գիտելիքների ստուգում:

Հաշվետու տարում կազմակերպվել և իրականացվել է նաև ՀՀ ՏԿԱԻՆ փրկարար ծառայությունում ծառայության անցնողների եռամսյա ուսումնական փորձաշրջանի դասընթացներ անցնողների ստուգարքները: 344 մասնակից, որից փորձաշրջանն ավարտել են 239-ը, փորձաշրջանում են գտնվում 47-ը, 58-ը հեռացվել են (18.12.2015թ. դրությամբ):

Այսպիսով, հրշեջ-փրկարարների վերապատրաստման և որակավորման բարձրացման ուղղությամբ հաշվետու տարում իրականացվել են՝

- Վերապատրաստման դասընթացներ, առարկայական քննություններ ու ստուգարքներ 488 մասնակից (պլան ժամանակացույցով նախատեսված՝ 167),
- Ատեստավորման արդյունքում վերապատրաստում 114 մասնակից,
- Եռամսյա ուսումնական փորձաշրջանի դասընթացներ 344 մասնակից:

3. Բարձրագույն և միջին մասնագիտական կրթական ծրագրերով մասնագետների պատրաստում.

Ուսանողների թիվը	Բակալավրիատ		Մագիստրատուրա		Միջին մասնագիտական
	առկա	հեռակա	առկա	հեռակա	
Ընդունվել է՝	90, որից 59-ը՝ անվճար	133	–	39	45
Ավարտել է՝ 228	38	123	13	18	36
վերականգնված	38	60	3	1	5
ազատված /ազգային բանակ	29	47	-	-	3
ազատված /այլ պատճառով	18	60	5	5	11

ԸՆԴԱՄԵՆԸ ուսանողների թիվը 16.12.2015 թ. դրությամբ	238, որից 133-ը անվճար	643	11	67	117
--	---------------------------------------	------------	-----------	-----------	------------

Այսպիսով բարձրագույն կրթությամբ ուսանողների թիվը 959-է, միջին մասնագիտական կրթական ծրագրով սովորողների թիվը 117-է:

4. Բնակչության ուսուցում.

Բնակչության ուսուցման ուղղությամբ կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Նախադպրոցական կրթական հաստատությունների և հանրակրթական դպրոցների ներկայացուցիչներին հանձնվել են 25 հատ «Ես կարող եմ», 26 հատ «ԱՌՆ կրթություն», 19 հատ «Ո՞վ եմ, ի՞նչ եմ», 25 հատ «Հոգեբանասոցիալական աջակցություն երեխաներին արտակարգ իրավիճակներում», 26 հատ «Դպրոցի տարիանման կազմակերպումը» ձեռնարկներ, հանձնարարականներ, և 45 հատ «ԱՌՆ կրթություն. Տառադարան»:
- Բացի այդ ՀՀ Տավուշի և Վայոց Ձորի մարզերի թվով 19 սահմանամերձ համայնքների դպրոցներին տրվել են պաստառների, հուշաթերթիկների, ձեռնարկների փաթեթներ՝ դպրոցներում աղետների ռիսկի նվազեցման անկյուններ ձևավորելու համար:

5. Գիտամեթոդական աշխատանքների կատարում.

Հաշվետու ժամանակահատվածում

- Հրատարակվել են 10 ուսումնական և ուսումնամեթոդական աշխատանք, 25 գիտական հոդված, «Ճգնաժամային կառավարում և տեխնոլոգիաներ» գիտական և գիտամեթոդական հոդվածների ժողովածուն, «Ճգնաժամ հաղթահարողներ» ուսանողական թերթի 2 համար:
- Ներկայացվել են 11 զեկուլցումներ միջազգային գիտական, գիտագործնական խորհրդակցություններում և խորհրդաժողովներում.
- Իրականացվել է ուսանողական գիտաժողով և հրատարակվել ժողովածու (41 հոդված):
- Ներկայացվել է 2 զեկուլցում ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտում:
- Ղեկավարվել է 31 մագիստրոսական ատենախոսություն:
- Հրատարակվել է □911 արտակարգ
- Մշակվել են կարգեր, կանոնակարգեր, ընթացակարգեր և այլ փաստաթղթեր կրթության զարգացման և որակի ապահովման ուղղությամբ:

6. Մշակութային դաստիարակության աշխատանքների կատարում

Հաշվետու տարում մշակութային դաստիարակության աշխատանքների կատարման ուղղությամբ առաջին անգամ կազմակերպվել են՝

- 10 այցելությունն տուն թանգարաններ, մատենադարան և ազգային պատկերասրահ, որոնց մասնակցել է շուրջ 130 ուսանող,
- 8 ներկայացման դիտում տարբեր թատրոններում, որին մասնակցել է շուրջ 150 ուսանող,
- 6 հանդիպում արվեստի, պոեզիայի, բժշկության ոլորտների ճանաչված ներկայացուցիչների հետ,
- 11 միջոցառում ակադեմիայի ուսնողների ներկայացմամբ,
- արշավ դեպի Թեղենիս, Արագած և Հատիս:
- ակադեմիայի 9 ուսանողների մասնակցությունը «Բազե 2015» համահայկական երիտասարդական հավաքին:
- Ակադեմիայում ձևավորվել են «Ակադեմիա 911» ուսանողական պարի համույթ (թվով 20 ուսանող) և «Ակադեմիա 911» ստեղծագործական համույթ (թվով 17 ուսանող):
- Խաղացվել է «Հիշում եմ և պահանջում» ուսանողական ներկայացումը Երևանի 6 դպրոցներում:

7. Միջազգային համագործակցություն.

Ակադեմիան իրականացրել է ուսուցման միջազգային ծրագրեր ՄԱԿ-ի UNDP-ի, unisef-ի, Սեյվ դը Չիլդրեն-ի, Գերմանական կարմիր խաչի շրջանակներում, մասնակցել է մի շարք գիտագործնական սեմինարների Ռուսաստանի Դաշնությունում, Բելոռուսում, Հայաստանում:

Փրկարարական ֆակուլտետի անձնակազմը մասնակցել է մի շարք միջազգային միջոցառումների Լեհաստանում, Ուկրաինայում և Հայաստանի Հանրապետությունում:

8. Լրացուցիչ աշխատանքներ.

Ի կատարումն ՀՀ ՏԿԱԻ նախարարի համապատասխան հրամանների ակադեմիայի դասախոսների կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- Մարզային ԶՈՓ թիմերի վարժանքների անցկացման նախապատրաստում,
- ԶՈՓ թիմերի ներքին որակավորման քննությունների նախապատրաստման տեսական և գործնական դասընթացների մոդուլների պատրաստում,
- Պատանի հրշեջ-փրկարարական թիմի նախապատրաստում,
- ՓԾ հրշեջ-կիրառական թիմի մարզումների իրականացում,
- Մասնակցություն «ՀՀ Կոտայքի մարզում ուժեղ երկրաշարժի դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը և իրականացումը» թեմայով հրամանատարաշտաբային ուսումնավարժության նախապատրաստմանը,

- Մասնակցություն «Ուկրաինա 2015» միջազգային դաշտային վարժանքին,
- Մասնակցություն մրցույթային և ատեստավորման հանձնաժողովների աշխատանքներին,
- Ակադեմիայի ուսանողները, որպես տուժածներ, մասնակցել են երկու հրամանատարաշտաբային ուսումնավարժությունների,
- Կազմակերպվել են հանդիպումներ սահմանամերձ գյուղերի դպրոցներում, անց են կացվել դասախոսություններ ուսուցչական անձնակազմի և աշակերտների համար:

Բացի այդ կատարվել է ակադեմիայի մասնագիտությունների համապատասխանեցում ՅՈՒՆԵՍԿՕ-ի դասակարգչին, ըստ ոլորտների և ենթաոլորտների:

Ակադեմիան միացել է ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների ազգային վարկանիշավորման համակարգին:

Ակադեմիան միջազգային չափանիշներին համահունչ կրթություն տրամադրելու նպատակով մշակել է համապատասխան փաստաթղթեր (կարգեր, կանոնակարգեր, ուղենիշներ, չափորոշիչներ և այլն):

9.Ուսումնական բազայի բարելավում

Ուսումնական բազայի բարելավման ուղղությամբ իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- Վերկառուցվել և վերանորոգվել են ուսումնական մասնաշենքի ամբիոնների աշխատասենյակները, երկու մեծ և երեք միջին լսարանները, դահլիճը և այլն.
- Վերափոխվել է ակադեմիայի գրադարանային սենյակը և կահավորվել համակարգչային տեխնիկայով.
- Ստեղծվել է կենսաբանական պաշտպանության կաբինետ.
- Ստեղծվել է ՃԿԿ-ի մոդելով լսարանային համալիր.
- Ակադեմիայի «Լուսակերտ» գործնական պարապմունքների բազայում լուծվել է ոռոգման ջրի խնդիրը, ավարտվել են 13-ական մետր բարձրությամբ ուղղաթիռով աշտարակի տեղադրման և երկու հատ պարանային աշխատանքներ կատարելու համար աշտարակների կառուցման ու տեղադրման աշխատանքները:

Տեղ գտած թերությունները.

Տեխնիկական հագեցվածության մեջ կան չլուծված խնդիրներ: Դրանք կապված են համակարգչային խաղարկման լսարանների տեխնիկական վերազինման, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրմամբ ուսուցման ինտերակտիվ մեթոդներում, ակադեմիայում ակտիվ մեթոդների ներդրման անհրաժեշտությամբ, ինչպես նաև նոր կաբինետների ձևավորման անհրաժեշտության հետ:

Ուսումնական բազայի հետ կապված կան թերություններ: Դրանք պահանջում են Լուսակերտի ուսումնական բազայի զարգացում, մասնավորապես տարբեր խոչընդոտների հաղթահարման վարժանքների համար անհրաժեշտ

վարժաիրապարակների ձևավորում, դեսանտային հմտությունների ուսուցման մոդուլների ստեղծում և այլն:

Ակադեմիայի փրկարարական ֆակուլտետի հակահրդեհային և փրկարարական ցիկլերում կա դասախոսական կազմով համալրման կարիք:

Թերությունների վերացմանն ուղղված աշխատանքները

- կստեղծվեն տարբեր խոչընդոտներ հաղթահարելու համար անհրաժեշտ մոդելներ,
- կձևավորվի դեսանտային հմտությունների ուսուցման գործնական վարժաիրապարակը,
- կտարվեն աշխատանքներ ֆուտբոլի, վոլեյբոլի դաշտերի ստեղծմանն ուղղված;
- կշարունակվի ակադեմիայի տեխնիկական վերազինման գործընթացը, հատկապես համակարգչային և ցուցադրման տեխնիկայով համալրումը:
- կզարգացվեն ուսումնական գործընթացում իրավիճակային վերլուծությունների և կառավարչական խաղերի ներդրման աշխատանքները,
- Կշարունակվեն աշխատանքները Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված մասնագիտությունները դասիչներով և անվանումներով ««ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների ազգային վարկանիշավորման համակարգ»-ի մեթոդաբանությունը, ցուցանիշները և հաշվարկի մեխանիզմները» փաստաթղթում ընդգրկելու համար, միաժամանակ կկատարվեն ակադեմիայի մասնագիտությունների համապատասխանեցում ՅՈՒՆԵՍԿՕ-ի դասակարգչին, ըստ ոլորտների և ենթաօլորտների.
- Մագիստրոսի կրթական ծրագրով կներդրվի «Կիրառական սեյսմոլոգիա» նոր մասնագիտությունը:
- Կներդրվի թատերական ներկայացումների և երգարվեստի միջոցով բնակչության ուսուցման նոր մեթոդաբանություն, ինչը կնպաստի բնակչության մեջ անվտանգության մշակույթի ձևավորմանը:

ՌԵԿՏՈՐ, Փ/Ճ ԳԼԴԱՊԵՏ

Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ